

ՄԵԼԿ

Տարեկան դիմել 10 բուրջ կէս տարեկան 6 բուրջ:

Առանձին համարները 5 կողմից:

Թիֆլիսում գրվում են միմյանի նմանությունները:

Ոտարարությունները դիմում են ուղղակի

Тифлис. Редакция «Мелк»

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տոն օրերէն):

Յայտարարութիւն ընդունելու է ամեն լիցուով:

Յայտարարութիւնները համար. զեպում են:

Խորանշինքը բաւին 2 կողմէ:

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ներքին լուրեր: ԱՐՏԱԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Գերմանիա: Անգլիա և Իռլանդիա: Նամակ Թիֆլիսից:—ԱՄԵՐԻԿԱՆ ԲՈՒԹԻՒՆՆԵՐ:—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, Դաստիարակութիւն հայերի մէջ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Գ. Գրիգոր Կարապետեան գնաց մեր խմբագրատան մէջ մի հատ ժողովածու պ. Քիւրք-ճանի լինի աւերակների և վճարեց մեղ 20 բուրջ:

Ստացանք ԱՇՏԱՐԱԿ գիւղից 38 բուրջ 20 կողմէ Վիննայի «Էտերնալ Պրինս» լրագրի բաժանորդագիրն: Գրովիները հետեւեալ անձինք են: Արշակ Տէր-Յովսէփեանց, Սարգիս քահ. Բլանտեանց, Ալէքսանդր Ղուկասեանց, Ն. Մ. Ալլաշվերդեանց, Սմբատ Սիւսկեանց, Կարապետ Գարսեանց, Սիմէոն Գարսեանց, Գէորգ Ղափանցեանց, Յակոբ Աղուսեանց, Խաչատր Դանադրեանց, Ալէքսան Մակարեանց, Ջաքար Տէր-Յովսէփեանց, Սահակ Աղուսեանց, Մովսէս Բաբայեանց, Գէորգ Դարչինեան, Ջոհնաք Դանադրեան, Ջանիբէկ Աղուսեանց, Արաշէս Մովսէսեան, Արգար Մակարեան, Ու. Տէր-Յովհաննիսեանց, Մկրտիչ վարդապետ, օր. Նիխիմ Սոփրասեանց, Ամանիա Սոփրասեանց, տիկին Թագուհի Սոփրասեանց և Սիմէոն Ջաքարեան:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԴԱՍՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՀԱՅԵՐԻ ՄԷՋ

Հանգուցեալ աւագ-քահանայ Ստէնէյի վերջին հրապարակեալ գործերից մէկը Երուսաղէմի դաշինքում գումարոված միտնգում նախագահել էր, որ ինկատի ունէր հայերի դաստիարակութեան շահերը: Այդ դէպքը լուսաբանում է աւագ-քահանայի լայնածաւալ համակրութիւնները: Նորա նկատմամբ յիշատակ կարելի է պնդել, որ նա հետաքրքրուում էր այնպիսի ամեն մասերում գտնվող մարդկային ցեղին վերաբերեալ որ և է արարութեան և յառաջդրութեան համար: Բայց մասնաւորապէս հետաքրքրուում էր նա այն վաղեմի ազգերի մասին, որոնք հին ժամանակներում բնակվել էին Միջերկրականի արեւմտեայ և նոյնպէս այն մեծ սարահարթում, որ հիմա յայտնի է իբրեւ Ասիական Տափաստան: Այն բաղաձայն գեղափայլել ձեռնեալ նուէրների մէջ, որոնք գրովեցան աւագ-քահանայի նորակերտ գերեզմանի վրա, ոչ մէկը չուներ այն խորհրդաւոր նշանակութիւնը, որքան այն ծաղկահիւս պըտակը, որ կրում էր այդ խօսքերը շնորհակալեաց նուէր հայերից: Պատգամաւոր գովում մի օտար երկրում՝ դրանց սրտերը զգածվեցան այն իրողութեամբ, որ մի այդպիսի գերահռչակ անձն և այդպիսի ընկղմված հրապարակական և անձնական գործերում, ուշադրութիւն դարձրեց մի մեկուսացած բաղաձայնար ժողովուրդի վիճակի վրա: Ո՛վքեր են հայերը և ինչ է այդ նրանց դաստիարակութեան խնդիրը, որ ներկայումս գրաւում է հրապարակական ուշադրութիւնը: Եւ կը քանամ պատասխանել այն հարցումներին, ամենակարգ կերպով, որքան որ թոյլ կը տայ մի այսպիսի սահմանափակ յօդուածի չրջանը:

(Քայմար) յօդուածագիրը նշանակում է Մեծն Հայաստանի սահմանները վրաստան, կովկասեան լեռները, Կասպից ծով, 38-րդ զուգահեռական լիճը հիւսիսային լայնութեան և եփրատի արև:

Առաջվայ 660 բուրջ 53 կողմ. փողի հետ կանխ 698 բուրջ 73 կողմէ:

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ մեծ պատեր թատրոնական ներկայացումներ առաւ արդիւրը վերաբերվում է միմյանի մայրաքաղաքների թատրոններին և ոչ թէ զաւառականներին, քանի որ այդ վերջիններին արդեն ներկայացումներ տալ մեծ պատեր, կը նշանակէր կատարելապէս քանդել զաւառական թատրոնների գոյութիւնը:

Լրագիրները հաղորդում են որ եկող 1882 թ.ից պանդոկներից վճարվող հարկերը բարձրացած կը լինեն: Այժմ պանդոկատները Ս. Պետերբուրգի մէջ ախտաւոր են իրաւունք ըստանալ առուտուր անել մի ժամ աւելի օրվայ մէջ, այսինքն մինչև 12 ժամ գիշերվայ, այն ինչ մինչև այժմ պանդոկները իրաւունք ունէին բաց լինել միայն մինչև 11 ժամը գիշերվայ:

Ջիբրիլիսի մեղ գրում են: Երկրկայ տարվայ մայիս ամսում տեղիս հայ և թուրք զինուորացիները, կառավարութեան հրամանով աջուղութեամբ կոտորեցին Արաքսի ափերում յայտնված մորեխը: Նորերումս նոյն դաշտերում գտնվեցաւ մեծ քանակութեամբ մորեխի սերմը, որ և ներկայացվեցաւ վարչութեանը: Ուրեմն զարնան դարձեալ մորեխ կերեալ մեր դաշտերի վրա: Ժողովուրդը այժմ համոզված է որ միացած ոյժերով կարող է կոտորել երեւցած մորեխը, ինչպէս և փորձը ցոյց տուց: Բայց ցաւալին այն է, որ Պարսկաստանում սարսափելի մորեխ է յայտնվում:

Մտնան ճիւղը. իսկ դրա արեւմտեան և հարաւային կողմում կայ, ասում է նա, Փոքր Հայաստանը որ պարունակում է իր մէջ հիւսիսային Սիւրիայի մի մասը, Կիլիկիան և Կարամանեան. նոյնպէս և Ուրֆա, որ Միջագետքում է և Արգէս լեռան ստորոտում գտնվող Կեսարիան Փոքր Հայաստանում էին: Նոյն յօդուածագիրը գովելով Հայաստանի մաքուր կլիման, ցոյց է տալիս որ դա կարող է մի ուժեղ և առողջ ցեղ առաջ բերել, և յետոյ շարունակում է այս խօսքերը: Եւ արդարեւ հայերը միշտ այսպէս են եղել և հիմա էլ այսպէս են: Ու մի երկրում նոր չէ ֆիզիքական այնպիսի լաւ օրինակներ գտնել քան թէ այդ ցեղի ներկայացուցիչները, որոնք վառայ ծովի չրջակայքից զալլա են Կ. Պոլսի և ծառայում այնտեղի մաքսատան մէջ իբրեւ բեռնակիր:—Այդ մարդիկը միջին հասակից բարձր չեն, բայց լայն ուսեր և կորովի ու պինդ կազմուածք ունեն և իրանց մէջքին բեռներ են կրում, որոնց առաջ ամենուժեղ եւրօպացիք յուսակտուր կը զողային: Դրանց բնական ոյժը ապացոյց է իրանց երկրի կլիմայի ազդեցութեանը:

Հայերը շատ կանուխ ընդունեցին քրիստոնէական կրօնը: Նրանց թագաւորը միտովեցաւ Կոնստանտինը քրիստոնէութիւնը զաւանելուց առաջ, և թէ և ունեցել են շատ թշուառութիւններ, բայց հայերը միշտ պահել են իրանց կրօնը: Մի քանի անշան գէպեր բաց աւելնով, նրանք ոչ Հոսոմի պապին, ոչ Կ. Պոլսի յայն պատրիարքին և ոչ Եւստաց Որթոդոքս եկեղեցուն են ենթարկվել: չը նայելով որ բազմաթիւ մի մեծամասնութիւն չեն կազմում, նրանք միշտ նախագահել են ունենալ իրանց ջոկ եկեղեցին, որի կենտրոնը Ռուսաստանում լինող և տանկաց պարսից սահմանադրի մօտ եղող Էջմիածինն է: Վերջին տարիներում խնդիր կար, թէ արեւմտեան Եւրօպայի բողոքական եկեղեցիք ճանաչեն արդեօք հայոց եկեղեցուն: Հոգևորականներին իրանց համահաւասար թէ ոչ, բայց այդ խնդիրը իմ այս յօդուածի սահմանիցը դուրս է: Սակայն շատ յարմար է և կարեւոր յիշել, որ այդ հոգևորականները ընդհանրապէս յայտնի են իբրեւ անուս և իբրեւ այնպիսիք, որոնք ուղեցել են իրանց ժողո-

վելու, որ և կանցնի, անշուշտ, մեր սահմաններից: Իսկ Պարսկաստանում վասակար միջատը չեն կոտորում:

Մեղ գրում են ԲՈՒԹԱՅԻՍԻՑ որ մի Եւստ պաշտօնեայ, քննիչ, սիրահարված լինելով մի հրէայ-գերմանուհու վրա, այս օրերս պատկվեցաւ այդ օրիորդի հետ, առանց որ և է բաժինը պահանջելու: Որիորդը ամուսնանալուց առաջ ընդունեց քրիստոնէութիւնը:

«Մշակ» ներկայ համարի բանասիրական բաժնում տպւում ենք անգլիական «Times» լրագրից թարգմանած մի յօդուած Կաստիարակութիւն հայերի մէջ վերնագրով:

ԱՐՏԱԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԵՐՄԱՆԻԱ

Մինչև որ պարլամենտական ընտրութիւնները Գերմանիայում վերջացած չէին, իշխան Բիսմարկ ամեն միջոցներով նպաստում էր հակահրէական շարժմանը, իսկ այժմ երբ յետագէմ կուսակցութիւնը յաղթվեցաւ, հրէաների վիճակը թշնամի, քաղաքի շտեկոկէր, ինչպէս հաւատացնում են, թաղաժողովի պահանջմամբ, հրաժարական ստացաւ իր պաշտօնից:—այժմ իշխան Բիսմարկ յայտնեց որ ամեն միջոցներ գործ կը դնի հակահրէական շարժմանը վերջ դնելու համար, քանի որ, ինչ-

պիտի դարձրուի կոշտ ու կոպիտ տղիտութեան մէջ տեսնել: Նոյն իսկ այս նոր ժամանակներում, որ հայերի մէջ կրթութեան և ուսման փափաք է արթնացել, այդ փափաքը շատ սակաւ քաջակրթութիւն է ստացել հայ հոգևորականների մեծամասնութեան կողմից: Մենք չենք ծանանութիւնս ենք ասում, ըստ որում պէտք է թոյլ տալ, որ կան հայ հոգևորականների մէջ մի քանի անդամներ, որոնք խոր և գործնական կերպով աշխատում են իրանց ազգի լուսաւորութեան գործին համար: Հայերի մէջ լաւ դպրոցներ հիմնելու դէմ եղող յաղթելի դժուարութիւնները արդարեւ քիչ չեն: Դրանցից առաջինը և ամենամեծը անուշտ ժողովրդի ընդհանուր չքաւորութիւնն է՝ բայց մանաւանդ բուն Հայաստան երկրում: Հէնց այս երկրումն են գտնվում բազմաթիւ հայեր և հէնց այդպէս էլ ներքինը ենթարկված են իրանց զրացի քուրդերի հարստահարութիւններին: Քուրդաստանում և Եփրատի ափերում ապրող հայերի վիճակը վերջապէս իր վրա դարձրեց Եւրօպայի մեծ պետութիւնների ուշադրութիւնը, և յոյս էլ կայ որ ծանրակշիւ կարգադրութիւններ կը լինեն տանկաց կառավարութեանը ստիպելու, որ նա իր այս պետութեան մասում գտնվող քրիստոնէայ հպատակներին իրական պաշտպանութիւն տայ: Բայց պէտք է խոստովանել, որ Տանկաստանի այս մասում տիրապետող անկարգութիւնը և ապօրինութիւնը մի նոր բան չէ: Այդ մի պարզ իրողութիւն է, որ օսմանցի թիւրքերը Փոքր Ասիանում անկեղծ յետադիմութիւններ են ցուցնում: Հայերի և Նիստուրականների այդ երկարատեւ հրապարակութիւնը կրաւալայրենի քուրդերին, բերել հասցրել է նրանց ազդեցութեան այն աստիճանին, որ պէտք է աչքով տեսնել ու այնպէս համոզվել: Տասը հազարներով հայեր փախել զընացել են Ռուսաստան, թողնելով իրանց անբաւ զինքներ և անապատ արտերը, որպէս զի սրանք վկային իրանց վրա տիրապետողների անտարբերութիւնը, եթէ չապեղ նրանց զրական ամբարշտութիւնը: Մնացող քրիստոնէայք բնակվում են ամենաթշուառ գիւղերում, աները կլիւով չափ թաղված են գետնում, և այս միջին տարիների-

պէս ինքն հաւատացնում է, երբեք չէր համակրում այդ շարժմանը: Եւ երբեք չեմ թոյլ տայ, ասեց պետական կանցլէր իր հրէայ բարեկամներից միին, թոյլ տալով նրան որ հրատարակի լրագիրներում իր ասածները, որ գերմանական հրէաների քաղաքական իրաւունքները սահմանափակված լինեն: Հրէաներին հայածելը դատապարտելի գործ է, աւելացրեց իշխանը, ինչ կէտից և նայէք այդ հայածանքների վրա, կրօնական թէ ցեղական տեսակէտից: Եւ գիտեմ որ հրէաները իրանց բնաւորութեան յատկութիւնների շնորհով, մեծ մասամբ պատկանում են ընդգրկմադրող կուսակցութեանը, բայց եւ երբեք տարբերութիւն չեմ արել հրէայ և քրիստոնէայ օպօզիցիայի մէջ, որ իմ քաղաքականութեան դէմ էր ընդմեռում: Ահա այն խօսքերը որ այժմ արտասանում է այն մարդը, որ մի քանի շաբաթ առաջ հրապարակապէս յայտնեց որ իրան շատ հաճելի են այնպիսի կանգիղականներ, ինչպէս Շտեկոկէր և այլ հակահրէականներն ու յետագէմները:

Ահա ինչ է նշանակում ազատամիտ և առաջադէմ կուսակցութիւնների յաղթութիւնը, ահա ինչ է նշանակում ընտրութիւնների մէջ ժողովրդի կամքի որոշ կերպով յայտնվելը:

Ինչպէս գումարում տեղացիք ժողովում են իրանց զաւակները և—բոլոր անասունները՝ այնպէս որ մարդիկը, կանայքը և որդիքը բնակվում են մի և նոյն սենեակում միասեղ: Հայերը հանգչելու համար պառկելիս լաւ գիտեն, որ ամեն մի պահում կարելի է կարթնացնեն նրանց կամ բարձր ազդակներով կամ իրանց չար թշնամի քուրդերի հրացանների ձայնով: Նոյնպէս էլ գիտեն նրանք, որ եթէ իրանց հարստահարիչների հրամանները կատարելը ուշացնեն՝ իսկոյն շարաշար կը տուժն և չեն կարող պրծնել:

Այս մարդիկը շարունակ կուր մէջ են իրանց կեանքի և օրական հացի համար: Ուրեմն մենք ինչպէս սպասենք նրանցից, որ նրանք հոգան իրանց որդիկները դաստիարակութեան համար: Բայց այդու ամենայնիւ պէտք է ասել ի պատիւ նոցա, որ նոյն իսկ Հայաստանի և Քուրդաստանի սրտում, ուր ամերիկացի միսիոնարները և ուրիշները սկսեցին դպրոցներ բաց անել հայերի գիւղերում, մեծաւ ուրախութեամբ ընդունելութիւն գտան: Ժողովուրդը ոչ թէ միայն պատրաստ էր բերկրանք ուղարկել իր զաւակները այդ դպրոցները, բայց իր խեղճ ապրուստի մի մասն անգամ տալ վարժապետներին ի հայի: Նոցա թոշակի: Մենք յիշեցինք այն երկիրները, որոնք սովորաբար յայտնի են Հայաստան անունով, որովհետեւ հայերի թիւը այդ տեղերում համեմատաբար աւելի շատ է քան Տանկաստանի մի որ և է ուրիշ մասնում: Փոքր-Ասիայի արեւմտեան մասնում, Միջագետքում և Տաւրոս լեռների հարաւունն եղող Կիլիկիայում և հիւսիսային Սիւրիայում բազմաթիւ հայեր կան, որոնք այն կոշտ վարչութեան չեն ենթարկված, որը իրանց ազգակիցները շատ տեսել են Տանկաստանի հիւսիսային արեւելի նահանգներում: Բազմաթիւ չէնց հիմա յիշված զաւակների հետ, դուք կը գտնէք կանօնաւորեալ կառավարութեան պէս մի բան: Թէ և չէ կարելի ասել թէ այդ կառավարութիւնը լաւ է և գործունէայ: Ամենայն ուրեք ուր որ Տանկաստանում կառավարութեան անուան արժանի մի բան կայ, այնտեղ հայերի և միւս քրիստոնէականների վիճակը ընդհանրապէս լաւանալու վրա է: Ճշմարիտ է,

Ընտրութիւնները վերջանալուց յետոյ մնացին մօտ հարիւր կրկնաքուէարկութիւններ։ Այժմ այդ կրկնաքուէարկութիւնները արդէն սկսվեցան և ընտրողական շրջաններին չորսի մէջ արդէն յաղթեցին ազատամիտները և պարզէսխանները։ Ազգականները, յետադէմները և սօցիալիստները այդ շրջաններում յաղթվեցան։

Լրագիրները հաղորդում են, որ Բերլին քաղաքի վեց ընտրողական շրջաններից երկուսի մէջ, պէտք է նոր, լրացուցիչ ընտրութիւններ կատարվեն։ Պարզէսխաններ Բիխտեր և Ջաուէէն, որոնք ընտրվեցան մի և նոյն ժամանակ և Բերլինում և գաւառներում, յայտնեցին որ ընդունում են գաւառական պատգամաւորութիւնները, այդպիսով երկու շրջաններ Բերլինում նորից ազատ են մնում և երկու նոր պատգամաւորներ պէտք է ընտրվեն։ Բիխտեր և Ջաուէէն այդպէս վարվեցին երեւի այն պատճառով, որ գիտեն թէ գաւառների պատգամաւորութիւնը չընդունելով, փտանգ կայ, որ իրանց տեղ կընտրվեն յետադէմները կամ կղերականները, որովհետեւ գաւառացի ժողովուրդը աւելի տգէտ է, նրան աւելի հեշտ է մոլորեցնել և նորից ընտրել տալ յետադէմներին, իսկ Բերլինի ժողովուրդը անպատճառ կընտրի ազատամիտներին, կամ առաջադէմներին։ Այդպիսով առաջադէմ կուսակցութեան թիւը պարլամենտում կաւելանայ։

Հակահրէական կուսակցութիւնը առաջարկեց իշխան Բիսմարկի որդուն ընտրել տալ նրան Բերլինի մէջ, բայց կոմս Բիսմարկ մերժեց այդ առաջարկութիւնը, համոզված լինելով, երեւի, որ նոյն անաջողութիւն կունենայ, ինչպէս ունեցել է Միւլհաւզէն քաղաքում։ Առաջադէմութիւնը պարզ տեսնում է այժման ընտրութիւններինք որ գերմանական հասարակական կարծիքի մէջ տիրապետում է այժմ ազատամիտ միտ ոգին և Բիսմարկին ընդդէմ դնում։

Ներքից որ գերմանական հասարակական կարծիքի մէջ տիրապետում է այժմ ազատամիտ ոգին և Բիսմարկին ընդդէմ դնում։

Գերմանական Post² լրագիրը ակնարկում է որ իշխան Բիսմարկի դիտաւորութիւն ունի հրաժարական տալ իր պաշտօնից, զգվելով գերմանական ազգի ապերախութիւններից դէպի իր անձը։

ԱՆՊԻՒԱ ԵՒ ԻՐԼԱՆԴԻԱ

Երբ Գլազգոսի ազատամիտ կառավարութիւնը սկսեց առանց գաղտնիքի կալանաւորել իրանդական շարժման կասկածաւոր անդամներին և մինչև անգամ պարլամենտի անդամներին, եւրոպական մամուլը ուրախութեան հետ խառն գործնեց յայտնեց։ Հաւածվածները կարող էին իրանց միջիմարել նրանով, որ ազատ Անգլիայի մէջ էլ աւելի լաւ է, իսկ կիսապաշտօնական լրագիրները նոր նիւթ ստացան արտաքին կարգի և վճարողական միջոցները արդարացիութեամբ։ Եթէ պարլամենտական կեանքի կլսակական երկրի մէջ կառավարութիւնը չէ քաշվում բռնութեամբ գործել հասարակական կարգապահութեան թշնամիների դէմ, ուրեմն ի՞նչի համար, օրինակ, պրուսական կառավարութիւնը չէ կարող խիստ միջոցներ գործ դնել այնպիսի հակառակորդների դէմ, ինչպէս Վիրսով կամ Մոմլէն են։ „Nord Deut. Zeitung.“ արդէն սպառնաց քնդդիմադրական կուսակցութեան առաջնորդներին ենթարկել Պարսկի վիճակին, իսկ ազատամիտ մամուլը չը կարողացաւ պատուիրանել այդ սպառնալիքին։ Մամուլը այն միտքն էր յայտնում, որ պարլամենտի

անդամների կայանաւորելը նշանակում է զեղծել դարեւոր պատմական աւանդութիւնները։

Բայց իսկապէս Գլազգոսից առաջնորդված անգլիական ազատամիտ կուսակցութիւնը չէ արժանացել ոչ գովասանքների և ոչ պարսաւանքի եւրոպայի պահպանողականների կողմից։ Բրիտանական կառավարութեան յարաբերութիւնները Իրլանդիայի հետ ազատամիտներից չէ որոշված, իսկ արտաքին կարգի միջոցները միշտ գործադրվել են իրլանդական ազգապետների դէմ, որոնք բացարձակ աշխատել են իրլանդիայից անջատվել։ Պարլամենտի անդամներէք ազատ չէ եղել կայանաւորութիւնից, երբ նրան մեղադրել են պետական գաւառանութեան մէջ։ Ներկայ տարվայ սկզբին, արտաքին կարգի օրէնքների քննութեան ժամանակ պարլամենտի մէջ իրլանդացի պատգամաւորները առաջարկեցին, որ պարլամենտի աշխատանքների ժամանակ անկարելի է կայանաւորել նրա անդամին առանց պարլամենտի համաձայնութեան։ Բայց պարլամենտը մերժեց այդ առաջարկութիւնը, որովհետեւ նա համաձայն չէր նախկին օրէնքների և ամենքին յայտնի պատմական փաստերի հետ։ Բայց 1800 մինչև 1822 թւականը անցած ժամանակամիջոցից, երբ պարլամենտը բացառական հանգամանքների պատճառով խտտութեամբ պահպանում էր իր իրաւունքները և արտօնութիւնները, միշտ պահպանվել է այն կանոնը, որ պարլամենտի անդամի կայանաւորութեան լուրը այդ գործը կատարվուց յետոյ է յայտնվել պարլամենտին։ Սրինակ 1848 թուականին Իրլանդիայի լորդֆոխարքան յայտնեց համայնքների ժողովին, որ պատգամաւոր Օրրիէն, մեղադրված լինելով դաւաճանութեան մէջ, կայանաւորված է։ Նոյնպէս և

1852 թուականին տեղական դատատանական իշխանութիւնը յայտնեց պարլամենտին, որ պատգամաւոր Օկոնեյր կայանաւորված է։ Երբ պարլամենտի անդամները մեղադրվում են, որ նրանք չեն հպատակում դատարանին, նախագահող դատաւորը հրամայում է նրանց կայանաւորել և այնուհետեւ այդ լուրը հաղորդում է պարլամենտին։ Այդպիսի անցքեր պատահել են 1831, 1874 թուականներին։ Ահեբե և ուրեմն, որ Պարսկի և նրա համախոհներին կայանաւորելը անսովոր չէ։ Իրլանդիայի պատմութեան մէջ այն ժամանակից, որ Անգլիան տիրապետում է այդ երկրին։

Իրլանդացիների վերաբերութեամբ մինչև այժմ Անգլիայի մէջ տիրապետում է յաղթողների զգացմունքը դէպի յաղթվածները, մի արհամարհական զգացմունք դէպի չերես արած իրլանդացիները։ Քաղաքական ազատութիւնները, որոնց անգլիացիները պաշտպանում են իրանց համար, իրլանդիայի թշուառ ազգաբնակչութեան համար չեն։ Բացառական օրէնքները, որոնք անդակալայի են բուն Անգլիայի սահմանների մէջ որ և է ժողովրդական շարժման դէմ, ուրախութեամբ հրատարակվում են պարլամենտից յաւիտեան անբաժան իրլանդական ազգաբնակչութեան դէմ, որ ստրկացրած է անգլիական կայսրածատէր արխտօկրատիայից։ Մինչև այժմ ոչ ունեն Գէորգ III-ի և Վիկտոր IV-ի օրէնքները վարչական միջոցների մասին, երբ իրլանդական գիւղացիները ձեռնամուխ են լինում կայսրածատէրների իրաւունքներին։ Եւ ի՞նչպէս էին ձեռնամուխ լինում իրլանդացիները այդ իրաւունքներին կամ վերջինները ի՞նչ տեսակ էին Իրլանդացիները իրաւունք շուռելին իրանց զաշտերը փաշտող փեսայի կենդանիներին ոչնչացնել։

Նրանք ամեն տեղ էլ ազգաւոր են, բայց նրանք աշխատասէր և գործունեայ են ու պատրաստ են ամեն մի դէպքից օգուտ քաղել որպէս զի իրանց կեանքը աւելի ևս տանելի անեն և իրանց որդկերանց ապագան ապահովացնեն։ Տաճկաստանի այս մասերում գտնվող հայերից, որոնց մասին հիմա խոսում ենք, կարելի է շատ բան սովորել իրանց քաղաքներում և գիւղերում զպրոցներ բանալու համար, թէև սկզբում նրանց պէտք կը լինէր ոչ սակաւ առաջնորդութիւն և օժանդակութիւն ժողովրդի վիճակը բարելաւելուց ջոկ իջնելու լաւ զպրոցներ հիմնելու դէմ մի մեծ արգելք օրինաւոր վարձապետների պակասութիւնն է։ Այս պակասութիւնը լրացնելը դիւրաւ կարելի է։ Բոլոր փոքր-կտրայում ամեն մի հայ գիւղ մեծ տիպոգրֆիւնով ուսուցիչ է պահանջում հասարակ զպրոցի համար, շատ անգամ յայտնել են մարդիկ իրանց կամքը, որ պատրաստ են զպրոցի շէնքը տալ և ուսուցչի բռնիքի մի մասն էլ կամ մինչև անգամ նրա բոլոր բռնիքը վճարել, բայց և այնպէս վարձապետ չէ ճարվում։ Այս պահանջը դնում է մեր առջև մի ընդարձակ դաշտ բարձրագոյն բարեգործութիւն կատարելու, և հայ ազգի մասւոր ընդունակութեանը և բնաւորութեան տոկոսնութեանը նայելով, տարակոյս չը կայ որ այս խոր պահանջը կատարելուց պիտի յառաջանան ամենաբարի հետեւեցներ։ Եթէ կարելի լինի հայերին, որոնք ցրուցան տարածված են բոլոր ասիական Տաճկաստանում, կրթել և իրանց ընկերական կեանքի մէջ բարձրացնել, նրանք անհնազուգ կերպով կը ներգործեն տաճկական պետութեան վերանորոգման ու վերածննդեան վրա։

Սակայն առաջ քան թէ խօսենք այն օժանդակութեան ձևի և չափի մասին, որը պէտք է անել հայերի դատարարական գործում, թոյլ տուէք ինձ նախապէս համագտարել ներկայացնել այն, ինչ որ այս ուղղութեամբ արդէն եղած կատարված է։ Անշուշտ ամեն մարդ, ով որ այս նիւթին ծանօթ է, պիտի խոստովանվի, որ հայ ժողովրդի դատարարական առաջին և ուժեղագոյն ջանքերն արել են ամերիկացիք։ Այդ

ջանքերը սկսել են 1831 թուին Կ. Պոլսում և այն ժամանակից ի վեր շարունակվել են անընդհատ կէս դար։ Այն պաշտօնական տեղեկութիւնները, որոնք հիմա իմ առջև դրված են, շատ իրողութիւններ են ներկայացնում այն զպրոցների ընդհանուր կրթական նկատմամբ, որ բաց են արել ամերիկացիք ասիական Տաճկաստանի հայերի մէջ և որոնք մինչև ցարդ արդիւնաւորապէս գործում են։ Այս իրողութիւններից մի բանիւր եւ կը դնեմ ձեր ընթերցողների առջև։ Ամերիկացոց ձեռքով հիմնված զպրոցները բազմաթիւ են, որոնք գլխաւորները հետեւեցներն են։ Հասարակ զպրոցներ, աղայոց բարձր զպրոցներ, աղջկերանց բարձր զպրոցներ, աստուածաբանական սեմինարիաներ, աղջկերանց սեմինարիաներ, և քոլէճներ։

Այս տեսակ տեսակ զպրոցների մասին մի կարճ տեղեկութիւն աւելորդ չի լինի տալը։ Այն հասարակ զպրոցներ ասվածները մի շատ տարական բան են, այդ զպրոցներում ուսանող երեխաների տարիքը ընդհանրապէս 7-ից մինչև 11-է։ Գլխաւոր դասերն են կարգալ, գրել, թուաբանութեան և աշխարհագրութեան տարրերը և սրբազան պատմութիւն։ Այս հասարակ զպրոցների թիւը 424 է, և զրանցում ուսում առնողներինը 14.454։ Այս զպրոցները, եթէ այսպէս անել կարելի է, խառն զպրոցներ են, որովհետեւ այդտեղ են միւս բարձր զպրոցների հիմունքը և նրանց սկզբնական անունը տուողը։ Ինչ որ վերաբերում է ժողովրդի ամբողջ ընդհանուր յառաջադիմութեանը, այդ հասարակ զպրոցները ամենից շատ կարեւորներն են։ Վստեղ չէնք զրանցում, որ հայերի երկու սեռի զաւակները սովորում են կարգալ և գրել և թուաբանութեան ու աշխարհագրութեան պարզ տարրերը։ Անշուշտ պէտք է խոստովանել, որ մի ազգի համար աւելի լաւ է որ նրա մի մասը հիմնաւոր կերպով հաստատված լինի ուսման սկզբնական տարրի մէջ, քան թէ անհասարակ հասնելին բարձր գիտութեան, մինչև անգամ իրական իրական կը լինէր խոր աղիտութեան մէջ։ Տաճկաստանի պէս մի արեւելեան երկրում անյարմար է գտնվել աղերքն ու սղջ-

կերքը միասին կրթել 11 կամ 12 տարեկանից բարձր։ Ուստի և ամերիկացիք հայերի մէջ երկու տեւերի համար առանձին առանձին զպրոցներ են կառուցել։ Սրանց կուտակ են բարձր զպրոցները։ Գլխաւորաբար այս տեսակ զպրոցների վիճակագրութիւնը անկատար է, բայց երևում է, որ ամենայն ուրեք ուր ամերիկացիք գործում են, այդ զպրոցներից կան։ Հարկաւ այս ուսումնաւորները դասերը աւելի առաջացած են, բայց գլխաւորապէս նման են այն ստորակարգ զպրոցներին։ Թուաբանութիւնը և աշխարհագրութիւնը սրանց մէջ աւելի բարձր է, մինչև և ուրիշ դասեր, ինչպէս տաճկերէն և հայերէն քերականութիւն, տաճկերէն լեզու արաբերէն տառերով, և տարրական բնագիտութիւն (physiology) ուսուցանվում են։ Այս բարձր զպրոցներում մինչև մի աստիճան ուշադրութիւն են դարձնում նաև ինքնուրոյն շարագրութեան։ Այս տեսակ զպրոցները աղջկաներին պատրաստում են աղջկերանց սեմինարիայի համար և աղերանցը քոլէճի համար։

Աղջկերանց սեմինարիաները անշուշտ այն բազմաթիւ օգտակար զպրոցներիցն են, որ ամերիկացիք հիմնել են Տաճկաստանում։ Դրանցից կը գտնենք հիմնված Կ. Պոլսում, Բուսասայում, Բաշչալիկում, Մարսուսանում, Կեսարիայում, Խարբեղում, Էրզրումում, Բաղէշում, Վանում, Մարզնիւում, Հաճրնում, Մարաշում և Այնթաբում, ընդամենը 13 հատ աղջկերանց սեմինարիաներ, թէպէտ և այս սեմինարիաները բացված են ամեն ազգի և ցեղերի համար անխտրաբար, բայց իրօք միմայն հայ աղջկուհիք են սորանց աշակերտանիները։ Այս սեմինարիաների դասերը բարձր զպրոցի ուսումից բարձր են։ Այստեղ մեծ ուշադրութիւն է դարձրած հայերէնի, տաճկերէնի և անգլիերէնի վրա, նոյնպէս և շարագրութեան ու երաժշտութեան, նաև սրբազան պատմութեան և բնական գիտութեանց մի քանի մասերին։ Մանաւանդ յայտնի նպատակով շատ ուշ են դարձնում դատարարական տեսական և գործնական ուսման վրա։ Տեղեկագրերը ցոյց չեն տալիս թէ այդ զպրոցներից ամեն մէկում քանի աղջիկ կայ, բայց եւ նկատեցի, որ ոչ մի

սեմինարիայի աշակերտուհիք 25 կամ 30-ից պակաս են։ Մինչդեռ մի քանիսն արեւելեան տոհմերի թիւը հասնում է 50 և մինչև 60։ Այս թիւից պէտք բաց առնել Մարաշու սեմինարիան, որ նոր է բացվել։ Ուստի յարմար եմ համարում միջին թիւով իւրաքանչիւր սեմինարիայի աղջկաները 30-ի չափ ընդունել։ Դրանք ընդամենը կանէ 390 աղջկուհիք։ Երբ որ մենք որ այդ աղջկաները մասնաւոր հազատարութեամբ ընտրված և այլ և այլ քաղաքներից ու գիւղերից բերված են այդտեղ, այն ժամանակ կարելի է հնչախ տեսնել այդ սեմինարիայի աղջկուհիք թիւը փոքր-կտրայի իրական սեռի վիճակը և բնաւորութիւնը կրթելու գործի մէջ։ Ուրախալի է իմանալ, որ աղջկերանց սեմինարիաները լաւ կրթված ամերիկահայերի հակողութեան տակ են։ Այս տիկիները իրանց նուիրել են այս բարեգործական նպատակին մի այնպիսի բանի մացութեամբ և տոկոսնութեամբ, որ արժանի է բարձրագոյն գովման։

Վերջապէս երկուստորոնցից քոլէճները։ Այժմ պիտի հիմնել են ամերիկացիք տաճկաց պետութիւնում չորս հատ. մէկը Կ. Պոլսում, միւսը Բէյրութում, յետոյ մէկը Այնթաբում և մէկը էլ Խարբեղում։ Բէյրութի քոլէճը միայն արաբախոս ցեղերի համար է, ուստի և մեր այս նշապատակից դուրս է, ըստ որում արաբացի յերի թիւը շատ փոքր է։ Կ. Պոլսում գտնվող Բոքերտ քոլէճը պարսկական է իր մէջ Տաճկաստանի գրեթէ ամեն աղջկութիւնից աշակերտներ, Սեմադոյն մասը բոլորապէս են, իսկ նորանցից յետոյ են հայերը։ Այնթաբի քոլէճը 87 ուսանողներից 3 հատը բացառելով, մնացեալը բոլորը հայ են։ Մինչդեռ Խարբեղի քոլէճը, որ չբացաւորված է ժողոված հայ ուսանող և քաղաքներով, ունի միմայն հայ ուսանողներ, Մի հիդդերոյ քոլէճ նոր է սկսվում։ Այժմ քոլէճը պէտք է հիմնվի Ճ. Մարսուսանում, որին շատ համակրում են փոքր-կտրայ հիւսիսային կողմի բնակիչները։